


Ծ Ի Ա Մ Ա Ն

Աշխարհ ամենայն դիտած է ծիածանն որ արևուն հակադիր կողմը կը տեսնուի վասն զի սորա ճառագայթներն ամպերուն վրայ զարնելով՝ որք կ'անձրևեն, իւր հետ կը ձգէ գորշագոյն մթու թեան հետք մը։ Այս տեսաբանական գեղեցիկ երևութիւնը զրու թիւնը 'ի գիտնոց Դեքարտի կ'ընծայուի. փորձով լաւ կը տեսնուի՝ զայս ապացուցանելու իսկական խնդիրը որ և ընդունելի եղաւ ամենուն, յետ այնմ՝ որ Նև-



Արուեստական ստացումն յիստանի, անդրադարձելով արեգական ձառագայրից խուրձ մը շրայից ապակեայ փամփոշտի մը վրայ։

տոն ճշտեց զայն անշափական հաշուոց ձեռքով։ Արևուն ճառագայթները անձրևի կաթիլներուն մէջ կը թափանցեն, որ բոլորակի ձևով կը Ներկայացուի, ու անգամ մը միայն ցոլանալով՝ կը բեկանին գնդաձև կաթիլին ստորին մակերևութին երեսը, դուրս կ'ելլեն ապա՝ կրկին անգամ և օ բեկանելով։ Այս բեկեկումն ու ցոլացումն, քը՝ ամենափոքր ինչ շեղումն կը պատճառեն արևուն ճառագայթից, սրով ամէնն ալ ի մի կէտ կը կեդրոնանան և հետեապէս անկէ դուրս

ելած ժամանակ մէկ ուղղութիւն մը կ'առնուն լուսոյ խուրձ մի կազմելով: Եւ որովհետեւ սպիտակ լոյսը կազմող ճառագայթներն անհատաբար կերպով կը բեկանին, այս պատճառաւ նոյն աստիճան լուսաւորութիւն չի ըլլար հայելոյն գուննոց վրայ նոյն անկեան մէջ: Դարձեալ ուրիշ գունաւորեալ աղեղ մը կ'ունենանք դիտողին զըլխոյն օտուերին համակեդրոն, որոյ դուրսը կարմիր է ու ներսը ճերմակ բիծերով խառն կապոյտ գոյն մը, և այս ահա առաջին կարգի աննափայլուն ծիածանն է:

Շատ անգամ ուրիշ ծիածան մ'ալ կը տեսնուի աւելի տժգոյն ու առաջնոյն համակեդրոն, բայց անկէ մեծ, որ կը ներկայացընէ գուննոց հակադիր շարք մը, ներսը կարմիր իսկ դուրսը կապոյտ: Այս երկոյթըս բացատրելու սկզբունքը նոյն է, սակայն այնու միայն կը տարբերի՝ որ սորա ճառագայթներն կրկին անգամ ցլոյցած են անձրեոյ իւրաքանչիւր կաթիլներուն մէջ:

Ամենապարզ միջոցաւ կարելի է պատկերացունել այս երկու ծիածաններն ալ արուեստական կերպով, ինչպէս Ձեր կը ցուցընէ: Անուշ 6 կամ 7 հարիւրորդամէզը տրամագծով շիշ մը ջրով լեցուն, ու արեգական լուսոյ հորիզոնական շող մը անցունել փեղկի մը վրայ բացուած լայն ծակէն. այն ատեն լուսաւոր ճառագայթներն կը ցլոյանան՝ ըստ որում վերը նշանակուած է, և անկէ կը ձևանան երկու աղեղներ, և կը տեսնուին ճերմակ լուսարգելի մը վրայ՝ որ 2 կամ 3 մէզր հեռի դուրսած է շիշէն: Գոյները ՚ի հարկէ աւելի նուազ կենդանութիւն կ'ունենան քան բնական ծիածանին մէջ տեսնուած ներք. բայց գուննոց շարքը և իրենց ունեցած լուսոյ համեմատական փայլը՝ անփոփոխ է:

ՁԱՅՆԱԳԻՐՆ ԻՒՐԵՒ ՎԿԱՅ

Արդէն իսկ մեր ընթերցողաց Ձայնագրի մանրամասն նկարագիրը տուած ենք, իսկ այսօր անոր զարմանալի կիրառութեանց մին պիտի պատմենք:

Բաւական ժամանակ սուաջ՝ հռչակաւոր Էտիսընի աշակերտին ճոնսինի կիրն զարհուրելի կերպով սպաննուած գտնուեցաւ իւր տանը մէջ ՚ի Ձիկակօ: Սուր դանակով մը նորա գլուխը գրեթէ բոլորովին կտրուած բաժնուած էր յիրանացն: Ամենին նշան մի չկար, որ կարենար անզգամ մարդասպանին հետքը յայտնել և ցուցընել: Մեռեալը քըննողն յետ անպտուղ քննութեան մը մուրհակը գրեց և մեմուայ, իսկ առած տեղեկութիւնքը այլոց չի յայտնեց՝ ըսելով. «Մի՛թի՛ն բան մ'է, որ շատ ծանր կերպով ապա պիտի լուսաւորուի»: Եւ եր.